

2856

D. M. G. Jr.

Գյուղը

Կամաց հազար տար թագավորութեան առաջ
մաս կուտակութեան

9(47)

Դ - 45

1925

Ա. Ի. ՌԻՉՈՎ

ԳՅՈՒՂՋ

ՏԵՏԵՍՎԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅՈՒՆ
ՅԵՎ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՆ

Թագավոր Ա. Ա. Խ. Ա. Խ.

ՀԱՅԱՐԴԱՐԱՎՈՐԻ ՀԱՅԱՊՐԻ

ԶԵՐԱՎԱՐ

1925 թ.

17 FEB 2010

Պեղկատմեր բայց չեւկրների, միացե՛ք.

9 (47)
N-45

Ա. Ի. ՌԻԿՈՎ.

**ԳՆԵՑԵՔ ՅԵՎ ՏԱՐԱԾԵՑԵՔ
ՀԱՅԿՈՂԴԻ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(Լույս են տեսել.)

1. Տիխոմիրով.—Ի՞նչպես անել, մոր կոռպերատիվի գործերը լավանան.—զունափոր շապիկով, 32 յերես, զինն և 20 կոպեկ:

2. Կոռպերատիվի առաջին բայցերը, գունափոր շապիկով, յերես 40—զինն և 30 կոպեկ:

3. Պ. Ֆոլյան.—Գյուղացի, ուժեղացրու կոռպերացիան—20 յերես, նկարազարդ շապիկով—զինն և 5 կոպեկ:

4. Հ. Տ. Մ.—Ինչպես պետք ելինի կոռպերատիվի գործակատարը—22 յերես, նկարազարդ շապիկ—զինն և 8 կոպ.:

5. Ինչպես հիմնել կոռպերատիվ խանութ—24 յերես, զինն և 10 կոպ.

6. Պոժիտով.—Ինչպես պետք ել հաշիվ տա սպառողական ընկերության վարչությունը—26 յերես, զինն և 15 կոպ.

7. Պ. Ֆոլյան «Կորչեն չարչիները» 16 յերես պատկերազարդ, զինն և 8 կոպեկ:

8. Շենին.—Մուրիակը—26 յերես, 30 կ.

9. Կերժեցեվ.—Կազմակերպիր ինքոր քեզ—56 յերես, զինն և 35 կ.

10. Ռատրովկայա.—Կոռպերացիան ինչո՞ւ համար ե պետք գյուղացուն.—զինն և 25 կոպ.

11. Դենիսով.—Կաղմայիրապեցիք խանութային և անձնաւողովներ, —զինն և 20 կոպ.

12. Ռէկով.—Կոռպերացիոնի մասին (ճառը յել բանաձեռքի նախազիծը)

ՀԱՆՁՆՎԱՇ ԵՆ ՑՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(ԹՍ.ՐԳ.ՄՍ.ՆՍ.ԿՍ.Ն)

1. Զայանով.—Կոռպերացիայի համառոտ դասընթաց:

2. Մակերովա.—Սպառկոռպերացիայի անցյալն ու ներկան:

ԳՅՈՒՂԱԿԱ

**ՏԵՍԵՍԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՆ**

Խարզմ. Պ. Ա. Ա. Յ. Յ. Յ.

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՂԴԻ»

ՏԵՐԵՎԱՆ

1925 թ.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Այս գրքույկը XIV կոռուկոնֆերանսում «պյուղի և կոռպերացիայի» մասին արված զեկուցման մի քիչ վերամշակված սղագրությունն է։ Այդ գեկուցման ամենապլիավոր մոմենտը հանդիսանում է յին ժոմանակակից պյուղի բնագավառում տարվելիք տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրները։

Չորս տարի առաջ «զինվորական կոմունիզմին» փոխարինած տնտեսական նոր քաղաքականությունը միայն այժմս և, վոր պետք և կիրարկվի զյուղատնտեսության բնագավառում։ Տնտեսական նոր քաղաքականությանն անցնելիս՝ մեծ յերկուզ եր առաջանում այն հետեւանքների վերաբերմամբ, վոր կարող եր ունենալ այդ քաղաքականությունը։ Մասնավորապես, մեր կուսակցության անդամների զգալի մասի մեջ ձայներ եյին հնչում այն մասին, թե ինչպես արդյունաբերության, այնպես և առեվտրի բնագավառներում տնտեսական նոր քաղաքականությունը կառաջացնե մասնավոր կապիտալի այնպիսի զարգացում, վոր կասկածելի կղառնա՝ թե արդյոք, կուսակցությունն ու պետությունը հնարավորություն կունենան իրապես կարգավորելու տնտեսական բոլոր պրոցեսները և ապահովելու մեր տնտեսության սոցիալիստական տարրերի զարգացումն ու շարունակ անող նշանակությունը։ Այդ յերկուզը ներկայումս կարելի յե համարել կյանքի կողմից լիովին և ամբողջապես վերացված։ Յերկրի տնտեսության մեջ պետական, սոցիալիստական տարրերը, յերբեք այնքան մեծ դեր չեն խաղացել, ինչքան այժմ։

Դեպի տնտեսական նոր քաղաքականությունը կատարված գարձի ժամանակ ավելի ևս մեծ զգուշություն ցուցանանվեց գյուղի վերաբերմաբ։ Տնտեսական նոր քաղաքականության սկզբունքների նախնական հիմնավորման ժամանակ ցուցում եր արված այն մասին, թե անհրաժեշտ է ապրանքաշրջանառության աղատությունը սահմանափակել տեղական շուկաների ընդ ջանակներով, չխոսելով այլևս այն մասին, վոր լիովին պահպանվեց զինվորական կոմունիզմի ըրջանում գյուղում վարձության աղատառների և հողի վարձակալության կիրարկման ժամանակամատ առաջա տակառակությունը ամբողջ նշանակությունը։ Իսկ



1982 - 88

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. № 95 թ.

Գառ. № 4223

Թիբաժ 2000

բուրժուական, կուլակային տարրերի դեմ մղվող կովի ժամանակ յերբեմն կիրարկվում են չքավորների կոմիտեների շրջանը՝ կովի դեռևս հին յեղանակները:

Հիմք ունենալով, մի կողմից, արդյունաբերության, տրանսպորտի բանկային սխատեմի, առեվտրի և այլ բնագավուներում մերունեցած նվաճումները և, մյուս կողմից, այն, վոր ամրացել ե կուսակցության և բանվոր զասակարգի ունեցած ազդեցությունը գյուղացիության լայն զանգվածների վրա, բարելավվել ե խորհրդային վող ապարատը և այլն—արտադրական ուժերի արագ զարգացման նպատակով անհրաժեշտ և անցնել տնտեսական նոր քաղաքականությունը գյուղում այնպիս կիրարկելուն, ինչպիս այդ արված ե քաղաքում:

Ներկայումս դժվար թե կարելի լինի սպասել վոր այս քաղաքականության կիրարկումը տեղի կտա այնպիսի առարկությունների և յերկյուղի, ինչպիսիք տեղի ունեցան 1921 թվին, արդյուրաբերության և փոխանակության բնագավառներում տնտեսական նոր քաղաքականության անցնելիս:

Ժամանակի սղությունը թույլ չտվեց փորբի շատե լրջորեն վերամշակել այս զեկուցումը և նույնիսկ ուղղել նրա վոճական թերությունները: Սրանով ել բացատրվում է այն, վոր կոռպերացիայի առանձին տեսակների դրության հարցի վերաբերմամբ հարկ յեղավ սահմանափակվելու միայն ամենաընդանուր բնորոշումով, չտալով կոռպերատիվ կազմակերպությունների արգի կացության սպառիչ վերլուծումը:

1. ՍԽՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

Ներկայումս կուսակցության և խորհուրդների առաջ կանգնած ե մի ինպիր—վորոշել հետագա աշխատանքի ձեղերը և մեթոդները՝ համապատասխան այն տնտեսա-քաղաքական պայմանների, վոր տնտեսական քաղաքականության չորս տարվա ընթացքում ստեղծվել են ժողովրդական տնտեսության վերականգման հետևանքով:

Այս կապակցությամբ ել՝ կոռպերացիայի մասին կուսակցական ԽIV կոնֆերանսի որակարգում դրված հարցի սրությունը բացատրվում է վոչ միայն (և վոչ այնքան) նրանով, վոր կոռպերատիվ շինարարությունը մեր աշխատանքի մեջ խաղում և միանգամայն բացատրիկ դեր, այլ գլխավորապես նրանով, վոր

կոռպերատիվ պրոբլեմների մեջ իրենց արտացուլումն են գտնում ներկա մոմենտին կուսակցության առաջ կանգնած տնտեսաքաղաքական ընդհանուր խնդիրները:

Ուստի և, վորպեսզի կոռպերացիայի ինդիրներն ավելի պարզաբանենք, անհրաժեշտ ե բնորոշել յերկրի տնտեսական և քաղաքական զարգացման արդի ժամանակաշրջանի այն առանձնահատկությունները, վորոնցով այդ ժամանակաշրջանը տարբերվում է տնտեսական նոր քաղաքականության նախորդ տարիներից:

Միանգամայն բնական և, վոր յերկրի անտեսական և քաղաքական կյանքի մեջ չեն կարող վորակական վորոշ փոփոխություններ չառաջացնել մեր տնտեսականի քանակական այն փոփոխությունները, վորոնք տեղի յեն ունեցել և տեղի յեն ունենում տնտեսական վերելքի հիմունքով տնտեսական նոր քաղաքականության պայմաններում:

Այս բանն ստիպում է կուսակցությանը տակտիկական և կազմակերպչական բնագավառում մշակելու և նոր մեթոդներ՝ լայն զանգվածները ղեկավարելու համար:

Վերջին ժամանակներու կուսակցական աշխատանքը հենց այս հարցերի շուրջն ել ընթացել է գյուղացիության վերաբերմամբ: Այդ աշխատանքն ընթացել է հատկապես՝ խորհուրդներն աշխատանքու, գյուղում հեղափոխական որինականություններու, աշեղծելու, այնտեղ ազնիվ վարչություն կազմակերպելու գծով: Տրվել են նույնպես մի շարք այլ դիրեկտիվներ, վոր կապերիկան և նոր թերեւնության մեջ այս նոր թերեւնության մոմենտի հետ: Ընթացիկ մոմենտի հենց այս սուր հարցերին ե միա առնում քաղաքի կոռպերատիվ բնակչության լայն զանգվածների կոռպերացման աշխատանքը:

Իսկ վորմնք են նորհրդային Միության կյանքի այս նոր ժամանակաշրջանի հատկանշական գծերը:

Ինձ թվում ե, թե այդ առանձնահատկությունները պետք են վորոնել արդյունաբերության արագ զարգացման, ապրանքայնության աճման և սրա կապակցությամբ՝ յերկրի ապրանքաշրջանառության ընդհանուր մեծացման մեջ: Մեր արդյունաբերության հերկա դրության հաջար բնորոշ ե այն, վոր արտադրության արագ ծավալման հետևանքով նա մոտենում է մի դըրքության, յերբ ծարական նուսաստանից ժառանգություն մնացած և պատերազմի ընթացքում ու հեղափոխության տարիներում զրեթե չնորոգված նրա սարք գործի յի դրվում

իր ամբողջական կալողությամբ (հարցակ): Յերկրի առաջ իր ամբողջ հասակով ծառանում և արդյունաբերության ընազավառում կապիտալի ընդլայնված վերաբարդրման խնդիրը, այսինքն, այժմյան գործարանա - գործատնային (գործառուն - զավող, գործարան - ֆաբրիկա) ձեռնարկությունները նոր սարք ու կարգով ուժեղացնելու, նոր գործարաններ ու գործատներ կուռուցելու, նրանց եկեղեցի փիկացման հարցերը և այլն: Այլ կերպ, արդյունաբերությունն անկարող կլինի հոգալու ներքին շուկայի աճող պահանջները և կլանելու պրոլետարիատի նոր զանդվածներ: Մոտակա տարիների ընթացքում արդեն մենք կարող կլինենք մեծացնելու արդյունաբերության վրոշ ճյուղերի, որինակ, մասնավորապես, անկվածային արտադրանքը՝ միայն այն պարագայում, յերբ կընդլայնենք հիմնական կապիտալը, կկառուցենք նոր գործարաններ, նոր սարք ու կարդ կտանք հներին:

Արդյունաբերության մյուս ճյուղերը, ինչպես նավթայինը, թղթինը, արդեն այժմ իսկ աշխատում են իրենց տեխնիկական ունակության լիակատար կալողությամբ, և նրանց արտադրանքն անկարելի յե մհացնել առանց նրանց նոր սարք ու կարգի վրա խոշոր ծախսեր անելու:

Մինչև այժմ արդյունաբերությունը կարողանում եր ուժեղացնել իր ծավալման թափը հին, չաշխատող գործարանները բանի դնելով, վորի համար պահանջվում եյին համեմատաբար քիչ միջոցներ ու ժամանակ:

Հիմնական կապիտալի ընդլայնելու և նորոգելու հիմունքով արդյունաբերությունը ծավալելու համար պահանջվում են անհամեմատ ավելի միջոցներ և անհամեմատ ավելի ժամանակ:

Յեթե այդ ծավալումը չկարողանա հասնել գյուղի գնողական ունակության աճման հետեից, այդ դեպքում անխուսափելիորեն կարիք կլինի արտասահմանից ներածելու ավելի մեծ չափով վոչ միայն արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանն անհրաժեշտ արտադրական միջոցներ, այլեվ լայն գործածության առարկաներ:

Յերկիրը կարող եր արդյունաբերության հիմնական կապիտալը վերականգնել և ընդլայնել միայն համապատասխան այն թափի եշտակերի, վորոնցով տեղի յեն ունենում ազգային ընդհանուր յեկամուտի կուտակումն ու աճումը: Վերջին տարին, չնայած պակաս բերքին, չուկայի տարածությունն այնքան ընդլայնվեց, վոր այդ ընդլայնման հետեւից արդյունաբերությունը չեր կարողա-

նում հասնել, չնայած այն հանգամանքին, վոր վերջինս ամսեամիս ուժգնորեն մեծացնում եր իր արտադրությունը: Ներքին շուկայի տարողության հետագա մեծացումը, — յեթե մինչև իսկ այդ բանը պետք և կատարվի այս անցած $1\frac{1}{2}$ տարուց շատ ավելի պակաս չափերով — յերկրի առաջ ավելի սուր կերպով պետք ե գնե արդյունաբերության համապատասխան ընդլայնման և նրա հիմնական կապիտալների մեծացման խնդիրը: Յեթե արդյունաբերության մեջ կուտակման պրոցեսը յերկար ժամանակամիջոցով հետ մնա ներքին շուկայի աճումից և յերկրում տեղի ունեցող կուտակումից, ապա դրանով իսկ կփոքրանա խոշոր արդյունաբերության և պրոլետարիատի տեսակարար կշիռը մեր տընտեսության ամբողջ սիստեմում, և բովանդակ անտեսությունն ամբողջությամբ կլինի յերկրի մանր-բուրժուական արտադրության արտադրության արտասահմանյան շուկաների մեծ ազդեցության տակ:

Հիմնական կապիտալի մեծացման խնդիրն ավելի պակաս սրությամբ չի դրված նույալես տրանսպորտի բնագավառում: Մեր յերկաթուղային ցանցի մի քանի շրջանն արդեն այժմ իսկ բանում են իրենց տեխնիկական լիակատար կալողությամբ և այդ շրջաններում շարժման հետագա մեծացումը կապված է յերակաթուղու սարք ու կարգը բազում միլիոն ուռելով լրացնելու: Նոր սարք ու կարգ տալու կամ յերկաթուղային նոր շինարարության հետ:

Մենք ունենք յերկաթուղային շրջաններ, վորոնցով, շնորհիկ ճանապարհի մաշվածության, չեն կարողանում շարժել կամ ճանապարհի մաշվածության, տնտեսության և յերկաթուղային արժեքը:

Յերկրի ապրանքաշրջանառության հետագա աճումը սերտորեն շաղկապված է տրանսպորտային տնտեսության և յերկաթուղային նոր շինարարության հարցի հետ:

Միաժամանակ, արդյունաբերության և տրանսպորտի աճումը կապված է բնակարանային ճգնաժամի լուծման հետ, վորովհետեւ արդեն այժմ իսկ մի շարք դեպքերում առանց նոր շենքեր կառուցնու անհարին և մեծացնել ձեռնարկություններ, կարուցնու այն մասին, վոր բանրի կալողությունը: Այլևս չենք խոսում այն մասին, վոր վարչության կյանքի ընակարանային պայմաններն այնքան վատ վորների կյանքի ընակարանային պայմաններն այնքան վատ են, վոր բացասաբար են ազդում բանվորների արտադրական, նության վրա՝ արգելք են հանդիսանում բանվոր դասակարգի

հենցաղը բարելավելուն և կրթական մակարդակը բարձրացնելուն:

Հիմնական կապիտալի վերաբռնագրությունն իր լուծումն և պահանջում նաև գյուղատնտեսության բնագավառում, Մանավանդ վերջին տարվա ընթացքում, գյուղատնտեսության ունեցած վերելքի հետևանքով՝ գյուղացիությունը բացառիկ պահանջ և ներկայացնում գյուղատնտեսական գործիքների բոլոր և զանագան տեսակների՝ մինչև տրակտորը ներառյալ, Զնայած գյուղատնտեսական մեքենաշինության բոլոր գործառների ամբողջապես բանելուն և արտասահմանից զգալի քանակությամբ գյուղատնտեսական մեքենաներ ներածվելուն, զյուղացիական շուկայի կողմից՝ գյուղատնտեսական արտադրության գործիքների վերաբերմամբ արվող պահանջները մնում են չբավարարված:

Դյուղատնտեսական վարկի զարգացումն ահազին չափով կուժեղացնի գյուղացիության պահանջը՝ գյուղատնտեսական արտադրության գործիքների և արհեստական պարարտանյութերի վերաբերմամբ, Հիմնական կապիտալի վերականգնումը գյուղատնտեսության բնագավառում, անշուշտ, ավելի մեծ եֆֆեկտ (արդյունք) կտա, քան այդ լինում եր մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, վրովիճետ գյուղատնտեսության զարգացումը տեղի յե ունենում հողի ազգայնացման, գյուղացիների՝ հողաբաժիններով ավելի լավ ապահոված լինելու, կալվածատիրական կաբալային հարաբերությունների բացակայության և գյուղացիների մեջ ազրոնումիական գրագիտության աճման պայմաններում: Գյուղատնտեսներից լուժանց ասելով, յեռադաշտ սիստեմից բազմադաշտ սիստեմին և կանուխ հերկելուն անցնելը՝ ահազին չափով կմեծացնի գյուղատնտեսության արտադրանքը: Հստինքյան հասկանալի յե, վոր գյուղատնտեսության հիմնական կապիտալի վերաբռնագրության ընդհանուր նախադրյալն ամենաարագ կուտակումն և գյուղում:

Լուծել յերկրի հիմնական կապիտալի ավելացման խնդիրը՝ նշանակում և անցնել սոցիալիստական տնտեսություն կազմակերպելու համար տեխնիկա-տնտեսական բաղաստեղելուն, ուստի և այդ խնդիրը պետք է լուծել համաձայն ՍԽՀՄ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերականգնման և զարդացման վողջ ծրագրի:

Այս կապակցությամբ և յեղած փոքրի համախռտասխան պետք և վերաբռնագի Միության հերթիքիկացիայի այն ծրա-

գիրը, վոր իր ժամանակին հաստատել և Խորհուրդների Համագումարը՝ վորպես սոցիալիստական տնտեսության շինարարության հիմունք: Պետպլանը ներկա մոմենտում արդեն անցել և այդ աշխատանքին:

Այս խնդիրի իրագործումն ամբողջապես և լիավես կապված և սոցիալիստական կուտակման թափի հետ: Տնտեսական գործունեյության բոլոր տեսակների և գծերի վերաբերմամբ մեզ հարկավոր և կուտակման մի այնպիսի թափ, վորը կարողանար ապահովել արդյունաբերությունն ընդլայնելու՝ զրանով իսկ պրոցեսարական գիկտատուրայի իշխող բարձունքներն ամրացնելու և ամբողջ տնտեսությունը սոցիալիստական սկզբունքներով կազմակերպելու իրական հնարավորությունը:

Ներկա ժամանակաշրջանի համար պետք և ավարտված համարել հաստատուն վայուտայի (արժույթի) կոիվը: Տնտեսության վերականգման վողջ պրոցեսը տեղի յե ունենում զրամական այն կույուն սիստեմի պայմաններում, վորը հանդիսանում և քաղաքի և գյուղի բնականոն (նորմալ) ապրանքաշրջանառության հիմունքը և ապահովում և իրական կուտակման հնարավորությունը:

Այս ամենը գյուղատնտեսության զարգացման համար ել ստեղծում և այլ պայմաններ, քան առաջ եր:

Այժմ գյուղի արտադրական ույժերի զարգացումը տեղի յե ունենում պրոլետարիտափի տնտեսական գիկտատուրայի այն կատարների (ազգայնացված արդյունաբերություն, տրանսպորտ, ֆինանսական և բանկային սիստեմ և այլն) գրեթե լիակատար «կալողության» պայմաններում, վոր մենք նվաճել ենք Հոկտեմբերյան հեղափոխության միջոցով: Յեթև առաջ, հեղափոխության սկզբնական տարիներում, արդյունաբերությունը սոսկ ազգայնացված եր, բայց աշխատում եր մինչպատերազմյան նորմայի մոտավորապես 20 տոկոսի կալողությամբ, բանկերը միայն պետական եյին, բայց փաստորեն գրիթե անգործություն եյին սատնված, ապա այժմ թե արդյունաբերությունը, թե բանկերը, թե պետ-բյուջեական գործունեյությունը հանդիսանում են մեր վոչ միայն, այսպիս առաջ, «իրավական տիազուները», այլև Միության տնտեսական վողջ կյանքը կարգավորող իրական լծակներ:

Ներկա մոմենտի տարրերությունը գիցուք, 2—3 տարի առաջ մեր ապրածից նույն ե, ինչ տարբերություն վոր կապետական դատարկ կրպակի և ապրանքով լիքը կրպակի միջև,

Պատենտն ու ֆիրման նույնն են, բայց տնտեսական իրական դերը՝ միանգամայն տարբեր:

Ազգայնացված արդյունաբերության աճումը, տրանսպորտը, գյուղատնտեսական վարկի զարգացումը, դրամական կայուն սիստեմը, քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջանառության արագ աճումը,—այս ամենն ստեղծում է տնտեսական նոր քաղաքականության առաջին տարիներից արմատապես տարբերվող այնպիսի պայմաններ, վորոնք թույլ են տալիս վորոշ չափով այլ կերպ մոտենալ գյուղատնտեսության բնագավառում կանգնած այն խողիրներին, վոր կապված են մեր Միության տնտեսական կյանքի հիմական հարցի, այն ե, գյուղի արտադրողական ույժերի սաստկացված և արագացված զարգացման հետ:

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՅՈՒՂԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՍՌԱՆՉԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յեթև համեմատենք գյուղի ներկա դրությունը նրա այն դրության հետ, վոր կար տնտեսական նոր քաղաքականության սկզբում, ապա կտիմնենք, վոր իրավական տեսակետից, կարծես, մինչև վերջին տարիներս փոքր ի շատե զգալի փոփոխություններ գյուղում տեղի չեն ունեցել: Խսկ ըստ եյտության, տընտեսական նոր քաղաքականության հիմամբ, գյուղում տեղի է ունենում այն տեսակի քանակական աճում, վորը, ինչպես թըվում ե ինձ, մոտ ե մեր գյուղատնտեսության տնտեսական կառուցվածքի վորակական փոփոխությանը:

Գյուղի արդի կյանքը կարելի յե բնորոշել յերկու գծով: Նախ և առաջ, գյուղում նկատվում է այսպես կոչված հողային (ապրաբային) հարաբերական գերբնակշություն, —մեծ քանակությամբ աշխատող ձեռքեր կան, վոր չեն ոգտագործված իր արտադրողներ: Յերկրորդ, իր տնտեսության ապրանքայնության հիմունքով գյուղը ձգում է անցնել և արդեն մասամբ իսկ անցել է կուտակման: Վորքան ամրանում է արդյունաբերության և գյուղատնտեսության կապը, վորքան զարգանում է դրամական շրջանառությունը, այնքան ավելի և ավելի գյուղացիական տնտեսությունը դադարում է բնատնտեսություն, սպառանտեսություն լինելուց:

Այս տեսակետից՝ հաստատուն վալյուտայի մուծումը հանդիսացավ այն կտրուկ խթանը, վորն արագացրեց գյուղացիական տնտեսության ապրանքայնության թափը և այդ տնտեսության կուտակումը:

Ներկայումս վորքան մեծ ե այդ կուտակումը, ինչ չափով նա աեղի յե ունենում գյուղացիության կիսաքաղցածության հաշվին, գյուղացիության վմբ խավերի մեջ այդ կուտակումը կառարվում է ի հաշիվ յեկամտի ավելացման և վո՞ր խավերում՝ ի հաշիվ հավելյալ արդյունքի, —այդ հարցերին չենք կարող պատասխանել ստույգ թվերով: Ընդ սմին, ինձ թվում ե, հիմնական հարցն այս ամենի մեջ չե: Դիխավորն այն ե, վոր գյուղը, ունենալով իր ներսում ավելցուկ բնակչություն և ահազին քանակությամբ միության մեջ մոտ 40 տոկոս) ու կահույքաղուրկ (ինվենտարազուրկ) տնտեսություններ, ամես ամիս քանի գնում, ավելի ու ավելի պահանջ ե ներկայացնում արդյունաբերական ապրանքների և պահանջ վոչ միայն անձնական գործածության առարկաների, այլև գյուղատնտեսական արտադրության միջոցների:

Այս բանը չի կարող չնշանակել, վոր գյուղացիական տընտեսությունների մեջ տեղի յե ունենում կուտակում:

Սակայն, կատարյալ անիմաստություն կլիներ կարծել, թե գյուղի տնտեսական այս վերականգնումը պիտի ընթանա վոչ թե առարձին, անհատական գյուղացիական տնտեսությունների տարբեր աճման ճանապարհով, այլ գյուղացիական բովանդակ 22 միլիոն տնտեսության միաժամանակ, միատեսակ և համաշափ բարձրացման ճանապարհով:

Ազատ ապրանքաշրջանառության և մանր-բուրժուական տընտեսության պայմաններում միանգամայն անխուսափելի յե, վոր գյուղացիական տնտեսություններից վոմանք ավելի արագ աճեն, մյուսները՝ ավելի դանդաղ, վոմանք ել կանգ առնեն ու քայլացիքն:

Միանգամայն անխուսափելի յե, վոր ներկայումս բավականաշափ կահույք (ինվենտար), ավելի լավ լծկաներ ու շատ հոգունեցող և այս պատճառով այդ հողն ել ավելի լավ մշակել կարուղացող տնտեսություններն ել պետք և ավելի արագ աճեն ու զարգանան, քան այն տնտեսությունները, վոր դրված են ավելի վատ պայմանների մեջ:

Տնտեսությունների այս տիպի հետ միասին կան տնտե-

սությունների այնպիսի խմբեր, վորոնք լծկան անասունների, կահույքի պակասության և այլ պատճառներով բոլորովին չեն կարողանում մշակել իրենց հողաբաժինը կամ այնքան վատ են մշակում, վոր ստացված յեկամուտն անձեռնոտու յե գարձնում հողի մշակմամբ զբաղվելը։ Այս պայմաններն ստեղծում են մի դրություն, յերբ մյուսներից համեմատաբար արագ զարգանալու համարավորություն ունեցող տնտեսություններն անխուսափելիորեն «կիանդիպեն» աշխատող աղատ ձեռքերի ավելցուկի և աղատ հողեր լինելուն։

Այս պատճառով ել գյուղատնտեսության վերականգնումը անխուսափելիորեն կապվում է մշակների (բատրակության) աճման և հողի վարձակալության զարգացման հետ։

Պետք է նկատի ունենալ, վոր գյուղատնտեսության ներկա դրության հիմնական չարիքը վոչ այնքան հողի պակասությունը, անհողությունն ե, վորքան այն կապիտալների պակասությունը, վոր անհրաժեշտ են հողին՝ գյուղատնտեսության յեկամումը մի քանի անգամ բարձրացնելու համար։

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Արգյուք, պետք է վոր այս պայմաններում կուսակցությունն արտատնտեսական, այսինքն, անմիջական որենսդրավարչական կովի մեթոդով պայքարե գյուղացիության այն խավի դեմ, վորն իր տնտեսությունը վերականգնելու համար գյուղում պետք է վարձակալի անմշան՝ հողերը և ողտագործե ավելցուկ բնակչության աշխատող աղատ ձեռքերը։

Ուրիշ խոսքերով, արդյոք, պետք է վոր իշխանության գլուխ կանգնած մեր կուսակցությունը կովի գյուղի մասնավոր մանր կապիտալի դեմ իր արտամադրության տակ յեղող բոլոր միջոցներով, վորոնց թվում նույնպես վարչա-քաղաքական միջոցներով։ Իս հայեցակետով, վոչ մի կարիք չկա վարչական արգելակները զնելու գյուղի արտադրողական ուժերի զարգացման առջև գյուղատնտեսության մեջ աշխատանք վարձելու և հողը վարձակալությամբ տալու վերաբերմաքը։

Մինչև այժմ գյուղացիության ամենալայն զանգվածների մեջ գոյություն ունեցող աղքատության, գյուղատնտեսություննետանցության, վերջինիս մեջ տեղի ունեցող կուտակման

թուլության ուղարագաներում՝ գլխավոր բանը, վարը, ինչ ուզումեն լինի, անհրաժեշտ անել՝ այդ այն ե, վոր արագացվի գյուղի տնտեսական վերելքը, նրանում տեղի ունենա կուտակում, ուժեղանա քաղաքի և գյուղի միջև ապրանքաշրջանառությունը, և այս շրջանառության միջոցով գյուղատնտեսությունը զգվի խորհրդային ամրացած տնտեսության սիստեմի շրջանակը (որբիա): Ուստի, թվում ե միանգամայն անհրաժեշտ, վոր վերացվեն ժամանակակից գյուղի տնտեսական զարգացման ճանապարհին կանգնած այն խոչընդուները, վորոնք գյուղում վորպես ժառանգություն մնացել են զինվորական կոմունիզմի շրջանից, և վորոնք մեծապես խանգարում են գյուղատնտեսության բարեւավմանը և վերջինիս մեջ տեղի ունեցող կուտակման աճելուն։

Անհրաժեշտ ե տալ ավելի մեծ ազատություն՝ գյուղատնտեսական բանվորների վարձման և հողի վարձակալության զարգացման տեսակետից։ Ինարկե, այս նշանակում ե բուրժուական հարաբերությունների աճումը գյուղում, բայց ներկա մոմենտում գյուղատնտեսության վերականգնումն ուրիշ ձեերով չի կարող տեղի ունենալ։

Գլխավոր բանը, վոր անհրաժեշտ ե, այդ՝ գյուղում այնպիսի պայմաններ ստեղծելն ե, վորոնք ամենամեծ չափով կարողանային նպաստել արտադրողական ուժերի զարգացմանը գյուղում։ Խորապես սիստեմ և այն կարծիքը, թե ընդունին հնարավոր և նպատակահարմար ե իրավապես արգելել բուրժուական հարաբերությունների անխուսափելի զարգացումը։ Այս հայացքի սիստեմի հիմնված է ամենից առաջ այն բանի վրա, վոր «իրավական նորմաները» վերագնահատվում են վորպես գյուղի բուրժուական հարաբերությունների անխուսափելի զարգացման արգելակներ։

Անպատակահարմար և ավելին՝ զնասակար կլիներ, յեթե գյուղատնտեսության վերականգնումի ներկա պայմաններում՝ հակառակ տնտեսավորման արդյունաբերական առելքարական բնագավառի, գյուղում արգելական սիստեմ սահմանել մասնավոր կապիտալի վերաբերմաքը և սահմանափակել կուտակման չափը աշխատավորական նորմաներով։ Մրգելական այսպիսի սիստեմը, վոր հիմնված է գյուղատնտեսության մեջ մասնավոր կապիտալի գիմ վարձական «ճնշման» մեթոդներով կովելու վրա, ըստ հյության կլիներ խրախուսական մի սիստեմ այն ծածուկ, այլանգակ-կապիտալիստական, կաբալա-շահագործական հարաբերությունների համար, վորոնք չեն յինթարկվում պետական։

Կարգավովման և արգելք են հանդիսանում գյուղատնտեսության իրական առաջադիմությանը:

Դեռևս տնտեսական քաղաքակնության անցնելու մոմենտին Վ. Ի. Լենինը մատնացույց եր անում պրոլետարական պետության կողմից թույլատրելի մի այնպիսի քաղաքականության վրա, վորը մի կողմից, համապատասխանում և գյուղացիության սուբյեկտիվ մանր-բուրժուական ձգառմներին և մյուս կողմից, որյեկտիվ նշանակում և տնտեսության սոցիալիստական տարրերի ամրացում:

Այս թե ինչ եր զրում նա «Պարենտուրքի մասին» դրքույկում: «Ով հասնի այս բնագավառում (այսինքն հողագործության և արդունաբերության շրջանառության աշխուժացման բնագավառում, Ա. Ռ.) ամենամեծ հետեւանքների՝ թեկուզ մասնատնտեսական կապտալիզմի միջոցով, թեկուզ նույնիսկ առանց կոռպերացիայի, առանց այս կապիտալիզմի անմիջապես պետական կապիտալիզմի փոխանցելու, — նա համառուսական սոցիալիստական շինարարության գործին ավելի մեծ ոգուտ տված կինի, քան նա, ով «մտածելու» յե մաքուր կոմունիզմի մասին, զրելու յե ոեգլամենտներ, կանոններ, հրահանգներ պետական կապիտալիզմի ու կոռպերացիայի համար, բայց գործնականապես շրջանառությունն առաջ չի շարժելու:

Այս կարող ե պարագուս թվալ, մասնա-տնտեսական կապիտալիզմը սոցիալիզմին ոգնողի գերում: Բայց այս բոլորովին պարագուս չե, այլ տնտեսապես միանգամյան անվիճելի փաստ: Յերբ փաստ ե, վոր յերկիրը մանր-գյուղատնտեսական ե՝ առանձնապես քայլքայլած տրանսպորտով, վոր այդ յերկիրը դուրս ե գալիս պատերազմից և բլոկադայից, վոր նրա քաղաքականապես դեկավարն և հանդիսանում տրանսպորտն ու խոշոր արդյունաբերությունն իր ձեռքում պահող պրոլետարիատը, ապա ուրեմն այս նախադրյալներից անխուսափելուրեն բղխում ե, նախ այն, վոր տվյալ մոմենտում առաջնակարգ նշանակություն ունի տեղական շրջանառությունը, և յերկրորդ այն, վոր հնարավոր ե սոցիալիզմին աջակցություն ցույց տալ մասնա-տնտեսական կապիտալիզմի միջոցով (չխոսելով արդեն պետական կապիտալիզմի մասին)...

Ներկա մոմենտում կուսակցության առջեվ կանգնած ե գյուղատնտեսության բարձրացման համար օմասնա-տնտեսական կապիտալիզմը սոցիալիզմին ոգնողի դերում՝ ոգտագործելու խնդիրը:

Յեկ այստեղ անհրաժեշտ և միանգամայն պարզ և վորոշագական մի գիծ, վորն ամեն մի աշխատավորին հնարավորություն տար ըմբռնելու գյուղում տեղի ունեցող պրոցեսների ելությունը:

4. «ԿՈՒԼԱԿԻ» ՄԱՍԻՆ

Այս տեսակետից պետք ե քննել նաև «կուլակի» հարցը: Կարծյոք, «կուլակի» հարցի մասին այժմ բացարձակապես բոլորն են վիճարանում, սկսած գյուղական ժողովներից և վիլջացրած նահանգական կոմիտեներով ու կենտրոնով: Այս վիճարանության աթոիվ անհրաժեշտ ե նշել, վոր ընկերներից վոմանք յուրացրած բուրժուական հարաբերությունների աճման պրոցեսի անխուսափելիությունը գյուղում, ձգտում են, հաճախակի գործի եյությունը ծածկող ու վարագուրող ձեզով վորեվէ կերպ որինականացնել ու «արդարացնել» այդ պրոցեսը: Իրավացի յեր ընկ: Լարինը, վոր մատնանշում եր, թե հաճախ այդ պրոցեսի արդարացման համար մի քանի ընկերներ դիմում են այնպիսի միջոցների, վոր գործադրում եյին արեգաները, վորոնք ցանկանում եյին պաս որերը միս ուտել ուստի և որհնում եյին միսը ձկան անունով:

Այդ ընկերներն ապացուցում են, վոր կուլակի դեմ թույլատրելի և ընդունելի յին կավի ամեն տեսակի միջոցներ, սկսած որենսդրականներից, իրավականներից և վերջացրած վարչական կամայականությամբ: Իսկ հարուստ գյուղացուն չի կարելի ձեռք տալ, թեկուզ նա աշխատող ույժ վարձե, վարձակալությամբ հող վերցնե և դիմե շահագործման այլ միջոցների: Այդ գյուղացուն նրանք անվանում են պարզ կերպով հարուստ կամ ունեվոր և այս անունով ել նրան ջոկում են կուլակից:

Ինձ թվում ե, վոր միագամայն սխալ են հարուստ, ունեվոր գուղացուն կուլակին հակագրելու փորձերը:

Վիճարանել այդ հակագրությամբ, նշանակում ե սխոլաստիկայով զբաղվել: Այստեղ անկարելի յե ուղիղ սահմանագիծ անցկացնել, և քաղաքական այս կարեվորագույն հարցի լուծումն այսպիսի հակագրության մեջ տեսնելը՝ վնասակար և վտանգավոր պատրանքներ սերմանել ե նշանակում:

Այսպիսի հակագրության պաշտպաններից մինն ե, ի միջի այլոց, նույնպես ընկ: Կալինինը, վորը «կուլակի» գաղափարի

Վրոշման հարցի մասին ունեցած իր տեսակետի ուղիղ լինելը հաստատելու համար հիշատակում ե Վլադիմիր իլիչին:

Ուստի, հարկավոր ե մի մեջբերում անել Վ. Ի. Լենինի յերկերից (տես «Կապիտալիզմի զարգացումը», յերկերի ժողովածու III հատոր, էջ 139, նոր հրատար.):

«Նարոդնիկական սովորական այն հայեցակետը, թե «կուլակն» ու «տնտեսարար մուժիկը» հանդիսանում են վոչ թե միենույն տնտեսական յերեվույթի յերկու ձեզը, այլ յերեվույթների վոչով միմյանց հետ չկապված ու հակադիր տիպի, բացարձակապես վոչնչի վրա չի հիմնված:

Այս հայեցակետը նարոդնիկական այն նախապաշտամունքը ներից մին ե, վոր վոչ վոր յերեք չի յել փորձել ապացուցել տնտեսական ձիւտ տվյալների վերլուծումով։ Տվյալներն ասում են հակառակը. մեկ ե, գյուղացին բանվորներ և վարձում անտեսությունը լայնացնելու համար, հողի... կամ նպարեղնի առեղութեր և անում, թե նա կանեփի, խոտի, անտառների և ուրիշ ապանքների կամ փողի առեվտրով և պարապում (վաշխառուն), նա իրենից ներկայացնում և անտեսական միենույն տիպը, որա գոծարքներն իրենց հիմունքում հանգում են անտեսական միենույն հարաբերություններին։ Ահա ընկ. լենինի կարծիքը ներկայումս մեզ հետաքրքրող հարցի մասին։

Իսկ վարագույնել անտեսական նոր քաղաքականությունը գյուղում ծավալելու քաղաքական գիծը՝ «տնտեսարար գյուղացուն» (մուժիկին) ամեն կերպ խրախուսելու անհրաժեշտության դատապությամբ, հակադիրով այդ գյուղացուն «կուլակին», նշանակում ե, մի կողմից, աչքերը փակել գյուղի բուրժուական հարաբերությունների աճման անխուսափելիության հանդեպ էլլուսիայում անումեց բախող քաղաքականու տնտեսական հետեւ յեղած նարոդնիկական հայացքների վերածնմանը։

Եղուլակին և «տնտեսարար գյուղացու» (մուժիկի) մասին յեղած վեճի զգալի մասը վերսպանում է, յեթե ընդունենք, վոր գյուղի ներկա պայմաններում տրաագրողական ուժերի զարգացունների կարգացման հետ։

Մեր վերաբերմունքը դեպի այդ խավը պետք ե սահմանվի այն վերաբերմունքի նմանողությամբ, վոր մենք ունենք դեպի կողմիտալը քաղաքում, առեվտրա-արդյունագործական հարաբերությունների վեճում մենք պահանջում ենք առանձին մասնավոր ձեռնարկությունների գեղծումների դեմ քաղաքում։

Կան արջանում Վարչական միջոցներով մենք այժմ չպետք ե կովենք մասնավոր կապիտալի գեմ։ Պետության և մասնավոր կապիտալի փոխարարերությունները զասավորվում են տնտեսական մրցակցության, մրցան հիմունքներով։

Բայտ այս տիպի յել պետք ե սահմանվի նույնպես դեպի գյուղի բուրժուական խավն ունենալիք մեր վերաբերմունքը Անհրաժեշտ և գաղաքեցնել այդ խավի վարչական ճնշումը։

Յեթե մենք ուզում ենք ապահովել գյուղի տնտեսական հետազա աճումը, ապա պետք ե պայմաններ ստեղծենք բատրակների միանգամայն որինական վարձման համար և պետք գյուղացները հոգը վարձակալությամբ տալու գործը։¹⁾

Սրա հետ միասին գրված ե՝ իմ կողմից կոնֆերանս մուծված մի առաջարկ²⁾ այն մասին, վոր գյուղացիական այդ շերտին թույլ տրվի մասնակցելու կոռպերատիվ շինարարությանը։ Պետք ե վերացվի առաջ հաստատված այն սահմանափակումը, վորով այդ խավի առջև բոլորովին փակվում են կոռպերս ցիայի գոները։

Սակայն, սրա հետ միասին անհրաժեշտ և ձեռք առնել այնպիսի միջոցներ, վոր կուսակցությունը կարողանա ապահովված լինել, թե կոռպերացիայի իշխող կետերը չեն անցնի գյուղացիության բուրժուական խավի ձեռքը։ Այսու հանդերձ, յեթե ուղիղ են գյուղի զարգացման հեռանկարների բնորոշումը և իմ արած յեզրակացությունները, ապա ուրեմն պետք ե լրացուցիչ միջոցներ ձեռք առնել, վոր ինչպես կոռպերացիայի, այնպես և անմիջականորեն պետության կողմից հոգսցվին գյուղացիության չքավոր և միջակ մասի կարեքները։

Բոլորովին ակնհայտ ե, վոր նույնիսկ յուրաքանչ ժամանակաշրջանի ընթացքում մենք չպետք ե կարողանանք 40 տոկոս ձիազուրկներին ձիատեր գարձնել, ընդ սմին տալով նրանց մեռյալ կահույք և այլն, յեթե միայն, նախ չեվ առաջ, արա-

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1) Հասկանալի յե, վոր բուրժուական հարաբերությունների որինականացումը գյուղում միանգամայն չի բացացաւ այն, վոր կուսակցությունն ու կառավարությունը կը ուղիղ են և պետք ե կովեն շահագործման բոլոր պատրինի մեթոդների և կարալային հարաբերությունների գեմ այնպես, ինչպես նրանք կովում են առանձին մասնավոր ձեռնարկությունների գեղծումների դեմ քաղաքում։

2) Այս առաջարկը հայտնաբերվել է XIV Կուսկոնֆերանսը, Ա. Ռ. Անդունությունը և Կուսկոնֆերանսի կողմից։

զքնրաց բափով չզարգացնենք գյուղի կուտակումը յեվ յերկուզ՝
յերե այդ կուտակումը չուղղենք պետական յեվ կոռովեատիվ
եռւնով:

Կուտակային տնտեսությունների մեջ ազատ կուտակման
պայմաններ ստեղծելու պարագայում մեծանում և կուտակման
թափն ամրող տնտեսության մեջ, արագորեն աճում և համազ-
գույին յեկամուտը, մեծանում են սակավուժ չքավոր տնտեսու-
թյուններին տնտեսական իրական աջակցություն ցույց տալու
նյութական հնարավորությունները, լայնանում են ավելցուկ
բնակչության կլանման հնարավորությունները և, վերջապես,
ավելի նպաստովոր պայմաններ են ստեղծվում կոռովերացիայի
աճման և գյուղացիական խնայողությունները կոռովերատիվ հու-
նով ուղղելու համար:

Ահա այն հիմնականը, վոր անկյունաքար պետք և լինի
գյուղի տնտեսության վերականգման, այդ վերականգման կա-
պակցությամբ գյուղում տեղի ունեցող պրոցեսների և կոռովերա-
տիվ շինարարության հարցի համար:

5. ԶՔԱՎՈՐԻ ՅԵՎ ՄԻՋԱԿԻ ՄԱՍԻՆ

Գլխավոր բանը, վոր առանձնապես գժվար և թվում և վոր
ինչ զնով ել ուզում և լինի, անհրաժեշտուրեն պետք և իրագոր-
ծի, այդ այն ե, վոր գյուղում ազատուրյուն տալով կատիտա-
լին, մենք կարողանանք ավելի մեծ չափով, բան այժմ, մեր յե-
նեսը գարենել գետի հետով ու միջակը:

Անցկացնելով քարաքական այս գիծը գյուղատնտեսության
վերաբերմամբ, չի կարելի թերգնահատել այն վտանգները, վոր
ըղիսուր են գյուղացու հնարավոր մեկնարանությունից՝ թե մենք
մեր յերեսը դարձնում ենք գետի գյուղացիական նոր բուրժու-
ագիան: Ռւստի գյուղում վերացնելով «զինվորական կոմունիզ-
մի» մնացորդները, ստեղծելով իրական պայմաններ վերականգ-
ման պրոցեսները գյուղատնտեսության մեջ ծավալելու համար,
ընդլայնելով բարակների վարձման և հողի վարձակալության
հնարավորությունները, մենք այս ամենը պետք և կատարենք
այնպիսի յեղանակով, վոր ավելի մեծ չափով, քան ցայթմ, չքա-
վորն ու միջակը հանձին մեր, զգան իրենց իշխանությունը և
ստանան մեզնից անհամեմատ ավելի խսկական նյութական ա-
չակցություն, քան մինչև այժմ:

Սրա հետ միասին անհրաժեշտ և ոգտագործել բոլոր հնա-
րավորությունները նրա համար, վոր խորհրդային հասարակա-
կանության հիմունքով, հենց իր, գյուղացիության խորքերուս
աշխատելու միջոցով, բարձրացնենք գյուղի բարակային, չքա-
վոր և միջակ տարրերի քաղաքական ինքնագործունելությունը,
կազմակերպելով նրանց խորհրդագների զանուղան տնտեսական,
քաղաքական և կրթա-լուսավորական կազմակերպությունների
շուրջը: Ինչ չափով և տեղի ունենաց գյուղի բուրժուական (կու-
լակային) խավի աճումը, գյուղատնտեսության ճակատագիրը,
նրա արտադրանքի չափը, ինտենսիֆիկացիայի աճումը, գյուղա-
ցիական բնակչության գաղափարախոսությունը—այս ամենը գո-
րոշուց լինելու յի գյուղացիական բնակչության դեմ հիմնական
զանդվածը, այսինքն միջակները:

Բուրժուական նոր խավը, անգամ բուրժուական հարաբերու-
թյունների ամենաարագ զարգացման դեպքում՝ գյուղում—թեև
այնտեղ խաղալու յի բիշ ավելի մեծ դեր, քան մասնավոր կա-
պիտալը քաղաքում—բայց և այնպես, այդ խավը չե, վոր վորո-
շելու յի գյուղի զարգացման ընթացքը, այլ միջակն ու չքավորը:
Պոլիտարիատի և գյուղացիական բնակչության հիմնական
զանգվածի (չքավորների և միջակների) զաշինքն ե, վոր բոլոր
գեղքերում և ամեն կողմից իշխող ու վճռող մոմենտ և հան-
գիսանալու գյուղատնտեսության զարգացման և խորհրդների
աշխատանքի մեջ:

Բացի սրանից, այժմ յերբ պետական սկզբունքը մեզանում ու-
րի նշանակություն եստացել արդյունաբերության, առեվմտի,
վարկի և այլ բնագավառներում, գյուղացիության վերին շերտերում
տեղի ունեցող կապիտալիստական կուտակումն ինքը վոչ միայն
սերտ կախում կունենա մեր պետական սիստեմից, այլև կզրվի
մեր պետականության վերահսկման տակ, դեռ սրանից ել ավելին,
այդ կուտակումը պետք և ոգտագործվի գյուղատնտեսության
զարգացման ընդհանուր շահերի և ծրագրերի (պլանների) հա-
մապատասխան: Գյուղում տեղի ունեցող բոլոր պրոցեսների
կարգավորման և վերահսկման համար, նույնիսկ չհաշված գյուղա-
ցիության կոռպերացումը, վոր բացառիկ կարեոր նշանակություն
ունի, մնամ են ֆինանսական և հարկային քաղաքականությունը,
պետական վարկի ամրող սիստեմը, հում նյութերի պատրաստու-
մը, նրանց վերամշակումը, գյուղատնտեսության համար ոժան-
չուկ նշանակություն ունեցող արտադրությունների (սառնարան-

ներ, ելեվատորներ) սիստեմը և այլն։ Պետական և կոռպերատիվ հոյթայթիչ (Заготовительные) մարմիններն իրենցից ներկայացնում են այնպիսի կազմակերպություններ, վորոնց ձեռքով գրեթե ամբողջապես անցնում ե գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի մեծ մասը։ Գյուղատնտեսության ինդուստրիալիզացիայի (խոշոր արտադրության անցնելու) զարգացման, այնաև բարդ մեքենաներ մուտք գործելու հետ միասին, այլև չխոսելով ելեկտրիֆիկացիայի մասին, քանի գնա պետք ե մեծանա գյուղատնտեսության կախումը գործարաններից ու գործառներից, այսինքն, աղջայնացված արդյունաբերությունից ու բանվոր գասակարգից։¹⁾

¹⁾ Մանօրություն. — Ընկերների, բարերախտաբար, շատ փոքրաթիվ մի խմբի մեջ կա այն կարծիքը, թե համաձայնելով, վոր գյուղում պետք ե վերացվեն զինվորական կոմունիզմի մնացորդները, այդ բանը պետք ե անել անպատճառ այն պայմանով, վոր առաջինը՝ մեր ձեռնուրիցությամբ սուր կերպարանք ստանա զասակարգային կորվը գյուղում և յերկրորդ՝ վոր անհապաղ կանխալուծվի ապագայում գյուղատնտեսական բորժուազիային եքսպրոպրիացիայի յենթարկելու հարցը։ Այս տեսակետը, վոր XIV կոնֆերանսում ներկայացրեց ընկ. Լարինը, սիսալ և հետեւյալ պատճառներով։

Առաջինը՝ այս տեսակետը չափազանցնում ե բուրժյան խավի հնարավոր տեսակարար կշիռը գյուղացիուրնագավուում վճռական գերը պատկանում է գյուղացիաշակներին։

Յերկրորդ՝ բանվորական գիտատուրայի պայմաններում գյուղացիության չքավոր և միջակ խավերի շահերի պաշտպանության համար կան բոլորվին այլ միջոցներ, քան բուրժուական յերկրներում, վորտեղ չքավորը չունի ուրիշ յելք, բացի պետական իշխանության ամբողջ պարատն իր կողմն ունեցած բորժուազիայի գեմ մղած դասկարգային կովից։ Գյուղի չքավոր և միջակ խավերի շահերի պաշտպանության համար ինքը, խորհրդային և գնելու յե այս ընչափակաս խավիը շահերի պաշտպա-

Մինչև այժմ չքավորի մասին մենք հաճախ ավելի խօսել ենք, քան նրան ոգնել։ Այժմ մենք պետք ե սկսենք նրան ոգնել իրապես։ Որինակ, յեթե գյուղացիական քաղաքականության վերև մատնանշված դարձի հետ միասին մենք կարողանանք խուսափել հացի գների այնպիսի տատանումից, վոր նկատվում եր վերջին յերկու տարվա ընթացքում, ապա այդ կլինի ավելի իրական կոիվ «կուլակի», «կուլակային վտանգի» դեմ և ոգնություն չքավորին, քան վարչական ամեն տեսակի այլանդակությունները գյուղի ունեոր խավերի վերաբերմաբ։ Այս անցած տարին, շնորհիվ մասնակի անբերրիության և պետական իշխանության տրամադրության տակ հացի վորեւ պաշար չլինելուն, հացի գների չարաշան բարձրացման առաջն առնելու համար — մի բարձրացում, վորը կարող եր առաջացնել ընդհանուր թանգություն և սպառնալ կայուն վալյուտայի (արժույթի) գոյցությանը — պետությունն ստիպված յեղավ դիմելու լիմինների (սահմանագների) քաղաքականության։ Չխոսելով արգեն այն մասին, վոր այդ քաղաքականությունը մի շարք գեպքերում և շատ շրջաններում կիրարկում եր վոչ բավականաչափ ճկունությամբ, նա չկարողացավ բավականաչափ պաշտպանել չքավորի շահերն ընդգեմ գյուղի ունեոր խավերի։

Պետությունը շնորհիվ լիմիտային քաղաքականության,

նությունը համապատասխան հողային, հարկային, վարկային, ֆինանսական և այլ տեսակի քաղաքականության միջոցով։ Այս քաղաքականության հաջող կիրարկման համար անհրաժեշտ ե, ըստինքյան հասկանալի յե, ունենալ մեծ ակտիվություն, ինքնազործունեյություն և գյուղացիության չքավորում միջակ չափազանցների ամենալավ կազմակերպություն։

Յերրորդ՝ գյուղացիության ունեոր խավերի կուտակումը մոտ ապապայում կոնֆիսկացիայի և բռնագրավման յենթարկելու անխուսափելիության անհապաղ կանխորոշումն ուրիշ հետևանք չի ունենա, քան այդ կուտակումից խուսափելը։ Իսկ այն գեպքերում, յերբ այդ կուտակումը տեղի կունենա, նա տեղի կունենա այնպիսի ձերով, վոր պետությունը զրկված կլինի վորեւ հաշվառման, կարգավորման և այդ պրոցեսի ողտագործման հնարավորությունից։

նույնպես և շնորհիվ ներքին շուկայում ծախելու համար արտասահմանյան հացի ներածման, ընդհանուր առմամբ, խուսափեց մեր տնտեսությանն սպառնացող այն ամենասուր վատանգից, վոր անբերդիության տարում հապված և հացի շուկայի գների ազատ խաղի հետ: Այնուամենայնիվ, գների տատանումից շահվեցին գյուղացիության գլխավոր խավերը, վոր հացը գնեցին աշնանը և ծախում եցին գարնանն ուսուցրած գներով: Իսկ գյուղացիության չքավոր խավերը և միջակների շատ մասը վոր հացը ծախում են առավելապես միայն աշնանը և հարկադրված են լինում հաց գնել գարնան գարուցանքի սկզբին, այս անցած տարին բավականին մեծ վնաս կրեցին գների տատանումից:

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՈՌԵՐԱՑՍԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Վորչափ ներկայիս ամենագործոն հարցն այն է, վոր դարձանան գյուղի արտադրական ուժերը, վերանան գյուղացիական դանդաղածները զեկավարելու «ուազմա - կոմունիստական» մեթոդները, և ապահովի մեր տնտեսական վողջ սիստեմի ամենաարագ շարժումը զեպի սոցիալիզմ, նույնչափ վճռական նշանակություն ունի գյուղացիական լայն խավերի կոռպերացման աշխատանքը: Կոռպերացիայի գյուղում կատարած աշխատանքից և կախված անցողական ամբողջ ժամանակաշրջանի կենարժնական այն հարցը, թե պրոլետարիատի դիկտատուրի պայմաններում գյուղացիական մանր արտադրության տնտեսավարելու բնատնտեսական, մինչկապիտալիստական և կապիտալիստական ձևերից սոցիալիստական ձևերի անցնելու եվոլյուցիան ինչ ուղիներով և գնալու և ինչ բնույթ և կրելու: Գյուղի կուտակման անցնելու հետ միասին գործնական հարց և ծագում վորոշելու, թե ինչ ուղղությամբ և ինչ ուղիներով կրնթանա այդ կուտակումը, — հասունացող սոցիալիստական սիստեմի հունձվ, թե նրանից գուրաւ:

Պրոլետարական պետության համար, վոր ամբապետում և ժողովրդական տնտեսության հիմնական իշխող բարձունքներին (արդյունաբերություն, արանսպորտ, վարկային հիմնարկներ և այլն), վճռական նշանակություն ունի գյուղացիական տնտեսությունների մեջ տեղի ունեցող կուտակման պրոցեսների այն բությունը, վորը կուտեղացներ մեր տնտեսության նույնպես

սոցիալիստական տարրերի աճման թափը Այս տեսակետից մեր դիմումուր լծակը հանդիսանում է կոռպերացիան:

Գյուղատնտեսության մեջ կատարվող և կոռպեր, հունով անցնող կուտակումը կոդտագործվի համապատասխան մեր սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրների: Յեթե այդ կուտակումն անցնի մեր պետական սիստեմի, կոռպերացիայի ու մեր վարկային կազմակերպությունների կողքով, այն ժամանակ մենք կստանանք յերկու մըցող սիստեմի (կապիտալիստականի և սոցիալիստականի) մեկուսացում և անորինակը բարդություն՝ յերկրի տնտեսական վողջ կյանքը զեկավարելու և կարգագորելու տեսակետից: Այս իսկ պատճառով զյուղատնտեսության զարգացման տվյալ շրջանում (սատղիա) կոռպերացիայի հարցի ուղիղ լուծումը վճռական նշանակություն ունի սոցիալիստական տնտեսության շինարարության համար:

Ամենից առաջ կուսակցության առաջ կանգնած ե այն ընդհանուր հարցը, թե ինչ կողմից և ինչպես կարելի յե (և պետք ե) մոտենալ՝ զյուղի տնտեսությունը սոցիալիստարքին կազմակերպվող քաղաքի շրջանակը (որբիտա) գցելուն:

Գյուղատնտեսության զարգացող ապրանքայնության պայմաններում զործնականապես հնարավոր և տեսականապես ուղիղ կերպի մոտենալ գյուղը քաղաքի հետ շաղկապող հիմնական ողակի կողմից, — ապրանքացածանառության կողմից: Այսպիսով, զիմանակու ուղին անցնում է օրգանական բնագավառով, յեվ գյուղացիուրյան կոռպերացման խնդիրն այն է, վոր գյուղացիուրյունը կազմակերպվի յեվ միանալ վորպես արտաքրող:

Ավելորդ չի լինի այստեղ հիշել, թե անցողական շրջանում ինչ նշանակություն եր տալիս առեւթյան վարդմիր իլիչը, «կոսկունկու նշանակությունը» հոգվածում նա առում է: Առեւթյուն՝ ահա պատմական անցքերի շղթայի այն «ողակը», վորին մեր ամբողջ զորությամբ պետք ե փարենք մենք, վոր պրոլետարական պետական իշխանություն ենք, մենք, վոր կոմունիստական զեկավար կուտակցություն ենք: Յեթե մենք այժմ բավականին պինդ «կապչենք» այդ ողակին՝ մոտ ապագայում մենք հաստատապես կարիքանանք ամբողջ շղթային: Իսկ այլ կերպ՝ մենք ամբողջ շղթային չենք տիրանա, մենք սոցիալիստական տնտեսական հարաբերությունների հիմքի ստեղծության մեջ տարի առաջանացած կամաց պրոցեսների այն

Սխալ է հակառակ տեսակետը, վոր հենց այժմ ամենամեծ խնդիրը համարում է գյուղատնտեսական արտադրության (հողի

մշակումը, միասին անասուններ, կահույք ունենալը և այլն) պրոցեսի անժիշտական հանրացությը: Գյուղի ներկա զրության ժամանակ մեղ համար գլխավորն այն հարցն ե, թե քանի գյուղատնտեսական արտադրությունը մանր բուրժուական բնույթ ունի, պետությունն ու կուսակցությունն ինչ մեթոդներով աճ- բողջապես իրենց ձեռքում կարող են պահել գյուղի տնտեսական պրոցեսների վերահսկումը և կարգավորումը: Այս բանին մենք կարող ենք հասնել կազմակերպելով գյուղացիական տնտեսությունն այն գծով, վորը գյուղը կապում և քաղաքի հետ, այս- ինքն, կազմակերպելով գյուղացիներին վորպես ապրանք արտադրողների:

Այս հայեցակետն ուղիղ ե նույնպես մի այլ տեսակետից. այն ե՝ գյուղացիության այն հիմնական գանգվածի աեսակե- տից, վորը վճռում ե գյուղատնտեսության ճակատագիրը: Այս հիմնական զանգվածը բաղկացած է տնտեսատեր-միջակից, վո- րը, քանի կա գյուղատնտեսական արտադրության տվյալ տեխնի- կան, դեռևս յերկար ժամանակ հավաքական տնտեսություննե- րից դուրս կմնա:

Հավաքական միավորությունների զանազան ձևերի զարգացու- մը գյուղում պետք ե խրախուսել, և նրանց գերն աճելու յի: Սա- կայն, գյուղացիուրյան մասսայական միավորման հիմնական ձեվը, գյուղատնտեսուրյունը բարձր տեխնիկա-ենեսական ել- մունիով կազմակերպելու նախապահիք ներկայումս հանդիսա- նում ե բազմամիլիոն գյուղացիուրյան, վորպես ապրանք ար- տգրողների, կոոպերացումը: Մասնաւ անգամ չի կարելի, վոր մենք մոռակա մի շարք օտիների ընթացքում կարող կը լի- նենք հավաքական ենեսուրյուններից արտգրուրյան մի այն- պիսի ձեվ սեղծել, վորք տեսակարար կտրոք փոքր ի շատ ե վնական ենեսակուրյուն ունենաւը մեր ենեսուրյան քննիա- նուր սիստեմի մեջ: Կոոպերացիայի զարգացման և ամրացման միջոցով մենք պետք ե մի այնպիսի դրության հառնենք, յերբ կարողանար իրականանալ գյուղատնտեսական մանր բուրժու- ական արտադրության ամրողջության պրոցեսների իրական կարգավորումը:

Մեր աշխանքի մեջ գյուղատնտեսության հավաքական ձե- վերի զարգացման հարցերը վորոշ տեղ են բռնում, և այդ ձևերի նշանակությունը հետագայում քանի գնա, պետք ե մեծանա- ակայն, այսու հանդիրձ, կուսակցությունը հաշվի պետք ե առ-

նի, վոր գյուղացիության մասսայական կոոպերացման հիմնա- կան պրոցեսը պետք ե ընթանա ապրանքաշրջանառության և վարկի գծով: Բայց, սխալ կլիներ կարծել, թե գյուղացիության կոոպերացման բնագավառում մեր աշխատանքը պետք ե սահմա- նափակվի գյուղացիությանը բացառապես վորպես ապրանք ար- տադրողի կազմակերպելով, բոլորովին չմտնելով նրա գյուղա- տնտեսական արտադրության պրոցեսի մեջ: Համաձայն այս տե- սակետի, միմիկայն գյուղացիությունը շրջանառության կողմից կոոպերացներուց հետո՝ մենք կարող ենք անցնել գյուղատն- տեսական արտադրության զանազան պրոցեսների հանրացմանը:

Սխալ ե ժամանակի վերաբերմամբ այս յերկու հարցի մի- ջև այսպիսի ճիշտ սահմանագիծ անցկացնելը: Արդեն այժմ իսկ պետության և կոոպերացիայի աջակցությունից պետք ե ոգ- ավեն նույնպես գյուղատնտեսական արտադրության կազմա- կերպման այն հավաքական ձեվերը, վորոնց կենսունակությունը փորձված և ապացուցված ե իրականությամբ: Սակայն անհրա- ժեշտ ե այնպես անել, վոր այս բնագավառում չինի հարկա- դրանք, չինի մտացածին բան, վոր ինքը, գյուղացիությունը, իրականության մեջ, փորձով գիտակցե տնտեսավարման այս կամ այն ձեվերի ձեռնուու լինելը, Ծնդ սմին, անհրաժեշտ և հաշվի առնել, վոր ինչքան տնտեսավարման հանրացված ձեւերը գյուղատնտեսության մեջ պետք ե խաղան առաջադիմական դեր, նույգքան պահանջվում են նրանցից գյուղատնտեսական արտա- դրության ավելի բարձր, ավելի ինտենսիվ ձեւեր, քան ներկա- յումս կան գյուղում:

Բոլորովին սոցիալիստական շինարարություն չե այն մի քանի գյուղացիական տնտեսության հավաքական կազմակեր- պությունը, յերբ հողը մշակում են ֆայտե արորով: Գյուղական արորի միջոցով, մենք սոցիալիստական գյուղատնտեսություն չենք ստեղծի:

Գյուղից յեկած և մեծ հափշտակությամբ գյուղացիների հա- վաքական կազմակերպման (փայտե արորով) մասին պատմող մի ընկերոջ հետ խոսելիս՝ յես ասացի, վոր սոցիալիստական տեսա- կետից յես ավելի մեծ նվաճում կհամարեյի, յեթե այդ գյուղում գյուղացիների փայտե արորով կազմակերպած հավաքական տես- տնտեսության տեղ մի տրակառ յերեվար, վորովհետեւ սոցիալիս- տական գյուղատնտեսություն կազմակերպելու հնարագորության հախադրյալներից մինը գյուղատնտեսության ինտենսիվիկա-

ցիան և նրա այնպիսի բարձրացումն ե, վորը ներկայումս չկա:

Մեքենան, թեկուզ արտկտորը, այժմ կարող ե գյուղում կատարյալ հեղափոխություն առաջ բերել այն մտքով, վոր ունեքենայական այդ արտադրության գեպքում ավելի ձեռնտու կլինի անցնել նույնպես հողերի հանրային մշակման,

Տրակտորն անհամեմատ ավելի մեծ չափով կարող ե հեղափոխել գյուղատնտեսական արտադրական պրոցեսը, քան հազար ագիտատոր, վոր գյուղ են յեկել հողագործության հավաքական ձեզերի առավելության վերացական քարողով. Կոռպերատորներից մեկն ինձ պատմում եր գաղափարական այն աղղեցության մտին, վոր ունեցել ե տրակտորի մուճումը գյուղում: Ահա այն հարցերի շարանը; վոր հաջորդաբար ծավալվում են տրակտոր գնած՝ մեքենայի արտելի տոջեւ: Առաջինը՝ հարց ե ծագում, ամեն մի գաշտամաս (ՊՈԼԹ) առանձին վարել, գաշտասահմանը (Թումբը) պահպանելով, թե ամբողջ գաշտը մեկեն վարել, իբրև մի ամբողջություն: Վերջինն ավելի ձեռնտու յեւ Յերբ հողը վարել, պրծել են, առաջ ե գալիս մի այլ հարց — վարած հողը բաժանել թե այն միասին ցանել և բաժանել բերքը: Յերբ հացը հասավ, հարց ե ծագում — դեռ չվերցված բերքը միմյանց միջև բաժանել, թե միասին հնձել գաշտը և խուրձերը բաժանել: Յերբ հունձը հավաքական աշխատանքով վերջացած ե, հարց ե տրվում — այդ խուրձերը միմյանց միջև բաժանել, թե լավ ե միասին կալսել.

Միասին կալսելուց հետո իրար հարց են տալիս — հացահատիկը տուն գլուխ բաժանել, թե կոռպերատիվի միջոցով ծախել և փողը բաժանել միմյաց միջելի: Տրակտորը գյուղատնտեսության մեջ հասաւագելը գյուղացու մտքերին տալիս ե այս ընթացքը, վորը պատկերավորում ե գյուղատնտեսական արտադրության պրոցեսի հանրացման հնարավոր ուղին:

Ամեն կերպ պետք ե ոգնել այն հավաքական միավորություններին, վորոնք հաճախ առաջ են գալիս այն պատճառով, վոր առանձին գյուղացիք հնարավորություն չեն ունենում գնելու նույնիսկ ամենահասարակ տեսակի գութան: Սակայն, մեզնից չի կարելի թագցնել այն, վոր դա սոցիալիստական շինարարություն չե, վոր այդ բանը միայն մի սազմ ե, վորը կվերտնածի գյուղատնտեսական արտադրության հավաքական իսկական ձեերի միայն հետագյում, յերբ կիրարկվեն կատարելագործված մեքենաներ և տնտեսավարման լովագույն մեթոդներ:

7. ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Կոռպերատիվ շինարարության ուժեղացումը, բնակչության դանդաղացների կոռպերացումը, սկսած հոկտեմբերյան հեղափոխությունից, միշտ կազմել ե կուսակցության ամենակենսական հարցերից մեկը: Սակայն, միայն տնտեսական նոր քաղաքականության անցնելուց հետո, շնորհիվ մեր անտեսության մեջ մասնակալիստական սկզբունքի գեմ տնտեսական պայքար մղելու անհրաժեշտության, կոռպերատիվ շինարարությունը կուսակցության տակտիկայի մեջ գրավեց այն տեղը, վորը նա պետք է գրավի սոցիալիստական հասարակարգին նախընթացող անցողական շրջանում: Մի շարք բնագավառներում, առևտրական շրջանառության, մանավանդ, հատավաճառ առևտրի, գյուղատնտեսական մանր արտադրության, արհեստների, անայնագործության մեջ և այլ բնագավառներում կոռպերացիան հանդիսանում է բնակչության կազմակերպման գրեթե միակ մեթոդը՝ սոցիալիզմին անցնելու համար:

Ժողովրդական տնտեսության այդ բնագավառներում կոռպերացիայի հաջողությունը նշանակելու յեւ սոցիալիստական սկզբունքի աճում, տնտեսության խորհրդային սիստեմի անմիջական ուժեղացում և մասնակալիստական, անհատական սկզբունքի նշանակության փոքրացում: Փոխանակության կոռպերացումը նշանակում ե մասնավոր կապիտալի մահացումն առևտրի մեջ: Ամար արտադրողի կոռպերացումը և արտադրության բնագավառում կոռպերատիվ կոզմակերպությունների ինտենսիվ տնտեսության ու բարդ մեքենաների կիրարկման անցնելը, այսինքն՝ մեր տնտեսության սիստեմական պլանով աստիճանաբար խոշոր արտադրության անցնելը նշանակելու յեւ այն, վոր մանր արտադրողը հետզետե մտնում ե ուղիղ սոցիալիստական արտադրության սիստեմի մեջ:

Կոռպերացիայի գանազան տեսակներից ներկայումս ամենից ավելի զարգացած ե սպառզական կոռպերացիան: Այս անցած ամբողջ ժամանակաշրջանում նրա վրա անհամեմատ պահելի մեծ ուշագրություն ե դարձված յեղել քան գյուղատնտեսական վարկային և տնայնագործական-արհեստավորական կոռպերատիայի վրա:

Գյուղատնտեսությունը բարձրացնելու, գյուղի հետ յեղած

ապրանքաշրջանառությունը մեծացնելու և գյուղացիությունը կազմակերպելու սուր անհրաժեշտությունը ներկա մոմենտին առաջին տեղը տալիս ե գյուղատնտեսական և վարկային կոռպերացիային,

Սպառողական կոռպերացիայի վերաբերմամբ պետք է նշել ամենից տառջ այն, վոր նրա կամավոր անդամագրության անցնելն ամբողջապես և լիապես արդարացը իրեն, Ավելացավ սպառողական կոռպերացիայի անդամ-փայատերերի թիվը (նըրանք այժմ մոտ 8-միլ. են), շատ աճեց սպառողական կոռպերացիայի շրջանառությունը։ Սպառողական կոռպերացիայի գերն արդյունաբերության արտադրանքի ռեալիզացիայի (իրացման) գործում արտահայտվում է 25-30 տոկոսով։ Հազիվ կարելի յե վիճելի համարել այն նշանակությունը, վոր ունի սպառողական կոռպերացիան շուկայական գների կարգավորման մեջ։ Առանց սպառողական կոռպերացիայի մենք հազիվ թե կարողանայինք այսպիսի հաջողությամբ անցկացնել գների կայունության մեր կամացնիան՝ դրամական ռեֆորմի (բարեփոխության) շրջանում։ Առանց սպառողական կոռպերացիայի ոգնության ներքին շուկայի կարգավորումն անչափ կը բարդանար։

Սակայն սխալ կլիներ հուսալ, թե մոտ ժամանակամիջոցում կոռպերացիան կարող կլինի ընդգրկել ամբողջ սպառաշրջանառությունը։ Քաղաքում և գյուղում վերջին տարվա ընթացքում մեկեն բարձրացած ապրանքային արտադրանքը, անտարակույս, մեծանալու յե և տուաջիկա տարիներին պահանջելու յե հենց արտադրության մեջ այնքան միջոցներ գնել, վոր վոչ կոռպերացիան, վոչ ել պետական առևտուրը չպետք և կարողանան լիապես ընդգրկել աճող ապրանքաշրջանառությունը։ Ուստի և, առևտուրի բնագավառում շատ մեծ և լինելու մասնավոր կապիտալի տեսակարար կշիռը, և, հետեւարար, սխալ կը լիներ նրա առաջ հարուցել այնպիսի խոշընդուներ, վորոնք այս կամ այն աստիճանի կարող են դժվարացնել կամ դանդաղեցնել ապրանքաշրջանառությունը։

Գյուղատնտեսական և վարկային կոռպերատիվի վերաբերմամբ կոնֆերանսի նախորյակին տեղի յեր ունենում կենգանի վիճաբանություն։

Զանազան կարծիքների ներկայացուցիչների պայքարը հասավ նույն չափերին, ինչ և մեր տակամիկայի վերաբերյալ խորագույն հարցերի շուրջը տեղի ունեցած ամենասուր և բիսկա-

Զնայած դրան, ի հետևում հանձնաժողովի¹⁾ կատարած աշխատանքի, հաջողվեց հասնել մի վճռի, վորը հաջացը բոլոր վիճող կողմերին։ Այդ վճռությունը կայանում է հետեւալում։ Ներքեվում, գյուղում, ստեղծվում է միասնական գյուղատնտեսական-վարկային կոռպերատիվ, վոր հոգում է կոռպերացված բնակչության թե վարկային և թե մատակարարամիջնորդական կարիքները։ Դյուզում բոլորովին չպետք է լինեն հատուկ կազմակերպություններ առանձին վարկի և առանձին գյուղատնտեսական միջնորդամատակարման աշխատանքի համար։ Սակայն, միասնական գյուղատնտեսա-վարկային կոռպերացիայի կազմակերպմանը գյուղում պետք է հետվեն մի շարք լրացուցիչ միջոցներ, վորոնք կարողանային ապահովել կոռպերացիայի այդ տեսակի նպատակահարմար և կանոնավոր գործունեյությունը։ Այստեղ գլխավոր հարցն այն ե, վոր այդ գյուղատնտեսական վարկային կոռպերատիվի համար ստեղծվի մի այնպիսի կազմակերպություն, վորը կարողանա ապահովել ավանդները կոռպերատիվ մուծելու հնարավորությունը, և այն միջոցների հավաքումը, վոր կատարվում է գյուղացիական տնտեսության մեջ։ Այսպիսի հետեւանքի հասնելու համար անհրաժեշտ է, վոր ազատ ինեն ըստ այլ գործարքների պատասխանատվությունից այն վարկային միջոցները, վոր ստացվում են բնակչության կողմից մուծված ավանդներից, ինչպես և հավասարապես այն միջոցները, վոր արված են պետության կողմից գյուղատնտեսական վարկի գարգացման համար։ Մատակարար վաճառահանային միջնորդական ֆունկցիաներն այդպիսի կոռպերատիվները պետք է կատարեն ի հաշիվ հատուկ վարկերի, բայց վոչ մի գեպքում ի հաշիվ այն միջոցների, վոր հոգում են վարկային կարիքները։

Այդ յերաշխիքները պետք է ստիմանել նրա համար, վոր գյուղացիությանը տրվի այն հավաստիացումը, թե վարկային միջոցներն ապահովված են ամեն տեսակի սիսկից։ Այս միասնական կոռպերատիվը վարկային աշխատանքի վերաբերմամբ կապված է կենտրոնական գյուղատնտեսական բանկի սիստեմի

Պատճ. 1) Այստեղ ի նկատի յե առնված այն հանձնաժողովը, վոր կազմակերպել եր կուսակցության կենտրոնական կոմիտեն՝ XIV կոֆերանսին կոռպերացիայի բոլոր տեսակների հարցերը պատրաստելու համար։

հետ, իսկ իր աշխատանքի մյուս բոլոր ճուղերով նա մտնում է գյուղանտեսական կոռպերացիայի ընդհանուր ցտնցի մեջ:

Բացի սրանից, պետք է աշխատել, վոր գյուղատնտեսական կոռպերացիան հրաժարվի վաճառամոլությունից, սպառողական ապրանքների առևտությունից: Պետք իրազորձվի և ապահովվի սպառողական կոռպերացիայի և գյուղատնտեսական կոռպերացիայի Փունկցիաների լիտկատար սահմանաբաժանումը: Գյուղատնտեսական վարկային կոռպերատիվի համար պետք է մշակվի մի կանոնադրություն, վորը կկազմե այն նախնական կոռպերատիվ միավորությունների հիմքը, վոր յեկել են փոխարինելու ներկայումս գոյություն ունեցող վարկային և ընդհանուր գյուղատնտեսական կոռպերատիվներին:

Գյուղատնտեսական կոռպերացիայի գրությունը ներկայումս բնորոշվում է հետևյալով: Գյուղատնտեսական կոռպերացիայի շրջանառությունը բավականին աճել է: Գյուղատնտեսական կոռպերացիայի կենտրոնական և տեղական միությունների և առաջին աստիճանի կոռպերատիվների (առանց Ռէկրայնայի) հավաքային (շրջանառությունը հետեւյալ թվերով, 1923 թ. հուն. 1-ին—57 միլիոն, 1924 թ. հուն. 1-ին—255 միլ., 1924 թ. հոկտ. 1-ին—470 միլ.: Այսպիսով, գյուղատնտեսական կոռպերացիայի հաշվեկշիռը 1923 թ. հուն. 1-ի 57 միլիոնից 1924 թ. հոկտ. 1-ին հասել է 470 միլ., իսկ Ռէկրայնայի հետ միասին ամբողջ ՍևՀՄ-ում այդ գումարը հասել է՝ 1924 թվի հոկտ. 1-ին մինչդ 560 միլ. ոռություն: Գյուղատնտեսական կոռպերատիվների թիվը նույնպես բավականին մեծացել է: Գյուղում մենք այժմ ունենք մոտ 40,000 գյուղատնտեսական կոռպերատիվ: Սակայն, յուրաքանչյուր կոռպերատիվին հասած միջոցները գեռ բավականին քիչ են. նրանք հավասար են ընդամենը 15,000 ոռություն՝ ընդդեմ 60,000 ոռություն, վոր ընկնում եք ամեն մի համապատերազմյան կոռպերատիվի: Աննոդաստ են նույնպես կոռպերացիա տնտեսությունների վերաբերյալ թվերը: Այդ անտեսությունների թիվը ներկայումս 3 միլիոն են ընդդեմ 12 միլիոնի, վոր կոռպերացիա եյին մինչև պատերազմ:

Բնակչության դանդանացների կոռպերացման ինդրում սպառողական կոռպերացիան անցել է մինչպատերազմյան նորմաներից. իսկ գյուղատնտեսականը գեռ հետ և մնում այն ել բավականին հետ:

Գյուղատնտեսական կոռպերացիան վերջին տարիների ըն-

թացքում աճել է և ըստ շրջանառության, և ըստ անդամների թվի: Բայց յեթե վերցնենք բացարձակ թվերը, կտեսնենք, վոր նա դեռ շատ և թույլ: Գյուղատնտեսական կոռպերացիայի նշանակությունը ներքին շրջանառության մեջ ըստ առանձին ապրանքների և ըստ գյուղատնտեսության արգյունքների, արտահայտվում է հետևյալ թվերով (Սելսկո-սոյուզի տվյալներով), ըստ հացի 23%, ըստ կտավնատի 20%, ըստ յուղի զգալիորեն ավելի՝ 40%: Այս թվերն ըստինքյան բավականին մեծ են, սակայն նրանք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում կոռպերացիայի այն տեղին, վորը նա պետք է գրավի մեր անտեսության ընդհանուր սիստեմի մեջ:

Սակայն, գյուղատնտեսական կոռպերացիայի և կոռպերացիայի մյուս բոլոր տեսակների թերություններից մեկն այն է, վոր նրանք չեն կարողացել համաշաբել իրենց աշխատանքն այն միջոցների հետ, վոր նրանք ունեցել են: Այս բանը միշտք շրջաններում կոռպերացիայի համար ստեղծել է ճգնաժամեր, վոր հաճախ շատ ծանր են յեղել:

Կոռպերատիվ կազմակերպությունների մուրհակների բողոքարկումները շատ մեծ չափերի յեն հասել: Հունվարին բողոքարկումների քանակը հավասար եր 13.700-ի, փետրվարին՝ 14.800-ի, մարտին՝ 15.600-ի:

Բոլոր տնտեսական կազմակերպությունների բողոքարկված բոլոր մուրհակների ընդհանուր թվի մեջ կոռպերացիան շատ պատվավոր տեղ է բանում. այսպես, հունվարին կոռպերացիայի բողոքարկված մուրհակները կազմում եյին բողոքարկված բոլոր մուրհակների ընդհանուր թվի 40 տոկոսը, փետրվարին՝ 50 տոկոսը, մարտին՝ 61 տոկոսը:

Այս ամենալավ ապացույցն է այն բանի, վոր կոռպերատիվ կազմակերպությունները չեն կարողացել իրենց աշխատանքը համաշաբել իրենց ունեցած միջոցների հետ: Սելսկո-սոյուզի այս տարվա հունվարի 1-ի տվյալներով, գյուղատնտեսական կոռպերացիայի ամբողջ միութենական ցունցը հաշվում եր ընդամենը 24,5 տոկոս բարեփիճակ միություններ, 37 տոկոս անբավարար ու թույլ և 38,5 բավարար:

Ներկայումս այսպիս է մեր կոռպերացիայի և մասնավորապես գյուղատնտեսական կոռպերացիայի գրությունի: Ուստի և, այն գործնական դիրեկտիվների մեջ, վոր պետք է մշակվեն, գլխավոր ուշադրությունը պետք է գարձնել ինչպես մեր յեղած

կոռպերատիվ ցանցի ամրացման, այնպես և նրա աշխատանքի բարելավման վրա: Անհրաժեշտ ե բյուջեյական կարգով կոռպերացիային տալ նոր միջոցներ: Այս պատճառով կոռպերացիայի պետք է համար պետրուջեց 2-րդ կիսամյակում տրվում ե 12 միլ. ռուբլի:

Մի քանի խոսք արհեստավորական կոռպերացիայի և նրա նշանակության մասին: Կոռպերացիայի բոլոր տեսակներից անայնագործ-արհեստավորականն ամենից ավելի աչքաթող ե յեզիլ: Նրան ամենից քիչ ոգնություն են ցույց տվել, մեր տնտեսական մարմինները հաճախ նայել են, տսենք, այժմ ել նայում են արհեստավորական կոռպերացիայի վրա, վորպես մի մրցակցի վրա, վորին վոչ թե հարկավոր ե ոգնել, այլ ընդհակառակն, հարկավոր ե նրա գեմ կովել:

Մեր արդյունաբերության մարմիններից (որգան) վոմանց դեպի արհեստավորական կոռպերացիան ունեցած վերաբերմունքը հաճախ կրել ե ուղղակի կարալային բնույթ: Ինձ ապշեցրեց մի տեղեկանք, վոր տվեց ինձ Ս. Պ. Սերեգան: Նա, որինակի համար, մատնացույց ե անում մի այսպիսի փաստ: Տեղական մետաղագործական արդյունաբերության կարգավորման պետական մի մարմին հենց նրանով ե զբաղված, վոր տնայնագործից զբնում ե գանակներ՝ հատը 3 ո. 50 կոպեկով, իսկ ինըը պատրաստում ե զանակներ հատը՝ 6 ո. 50 կ. ու 7 ռուբլով: Նա տնայնագործական դասական նրանում ե իր զանակների հետ և նրանց ծախույթի հանում միջին գներով:

Մինչեւ վերջին ժամանակներս պետարդյունաբերությունը հաշվի չեր առնում տնայնագործության պահանջները՝ նրան հում նյութ, կիսագործվածքներ մատակարարելու տեսակետից: Նրան վոչ միայն վարկ բաց չեն անում, այլև չեն ոգնում մետաղեկտորտանք (ՁՕՄ) մատակարարելու գործում, Այսպիսի փաստեր շատ կարելի յեր բերել: Գյուղական տնայնագործ-արհեստավորական կոռպերացիայի վերաբերմամբ ստեղծվել ե այլանդակ վերաբերմունք, վոր տնայնագործի կոռպերացման համար կարող ե ունենալ շատ վտանգավոր հետևանքներ: Այնինչ, տնայնագործ-արհեստավորական կոռպերացիան ահազին նշանակություն ունի այն տեսակետից, վոր նա կլանում ե գյուղական բնակչության աշխատող ավելցուկ ծեռքերը:

Գյուղի այդ ավելցուկ բնակչությունը սեղմելու յե քաղաքի կողմը (давить на город) և ավելացնելու յե արդյունաբերական-

պահանջում բանակը, մյուս կողմից առաջանելու յե գյուղում աղքատություն: Հետագայում՝ չկարողանալով արագությամբ ընդլայնել արդյունաբերությունը, մենք հարկադրված ենք լինելու անող պահանջը գոհացնել արտասահմանից ապրանքներ ներածելով: Անհամեմատ ավելի նպատակահարմար ե, վորքան ույզ հնարավոր ե, այդ պահանջը բավարարել տնայնագործական արդյունաբերության հաշվին: Բացի սրանից, տնայնագործության մի շարք ճյուղերը հոգում են տնտեսական այնպիսի կարիքներ, վորոնք վոչ մի դեպքում չեն կարող հոգացվել մեր արդյունաբերության աշխատանքով: Այսպիսով, այն հարցը, թե ինչպիս վերացնել աղքատությունը զյուղում, վերտեղ աշխատանք գըտնել ձիազուրկների համար, իր զգալի մասով կապված ե տնայնագործության և արհեստաների գարգացման հետ: Ուստի և մի քանի ժամանակ առաջ հատուկ որենք հրատարակվեց տնայնագործների տուրքադրության ծանրությունը թեթևացնելու մասին: Անհրաժեշտ է աշխատել, վոր ինչպիս մեր արդյունաբերությունը, այնպիս և մեր վարկային և ֆինանսական մարմիններն արժատապես փոխեն դեպի արհեստավորական և տնայնագործական կոռպերացիան ունեցած իրենց վերաբերմունքը:

Յես կլոշագիր յերկու հարց ես, վոր կապված են մեր կոռպերատիվ շինարարության հետ: Առաջին հարցը՝ մեր կոռպերացիայի հրամանատարական կազմի մասին ե, յերկրորդը՝ կոռպերատիվ մարմինների ընտրության աղատության մասին:

Մեր կոռպերատիվ սխատեմի հրամանատարական կազմը շատ չնչին ստաժ ունի: Այս բանի մեջ պետք ե վորոնիկ ժամանակակից կոռպերացիային հատուկ բազմաթիվ թերությունների պատճառներից մինը: Կենավիճակարի կատարած հետազոտությունից յերեսում ե, վոր կոռպերատիվների վարչությունների անդամների ընդհանուր թվի 37-ից մինչև 24 տոկոսը (վերցրած կոռպերացիայի տարբեր տեսակները) մի տարուց պակաս ստաժ ունեն և 30-ից մինչև 38 տոկոսը՝ 1—3 տարվա ստաժ: Զնայած այս կոռպերատիվ ջանելության, միանգամայն ավելորդ յեռանդ բանեցնելով՝ շարունակ ընկերներին զցում են մի կոռպերատիվից մյուսը: Շնորհիվ անընդհատ տեղափոխումներին, կոռպերատիվ ընդհանուր փորձառության բացակայության ավելանում ե նաև միջավայրի և ամեն մի առանձին կոռպերատիվի մասնագոր, անհատական խնդիրների անծանոթությունը: Անհրաժեշտ է աղատական կոռպերատիվ մարմինների հրամանատա-

րական կազմի ավելի կայունությունը և այդ կազմի մեջ կոռպերատիվ աշխատանքի փորձառություն կուտակելը, ինչպես և անհրաժեշտ և կոռպերատիվների վարչությունների մեջ աշխատելու համար այնպիսի ժամկետներ սահմանել, վորոնք վարչությունների աշխատավորներին հարավորություն ընձեռելին վոչ միայն ծանոթանալու միջավայրին (ориентироваться) և տվյալ կոռպերատիվի պայմաններին, այլև աշխատանքի ծրագիր կազմելու և այդ ծրագրի իրագործման մասին կոռպերացված ընակչությանը հաշիվ տալու:

Յերկրորդ հարցը կոռպերատիվ մարմինների տնտեսության հարցն եւ:

Կոռպերատիվ շինարարության միջոցով գյուղացիական մանր արտադրությունը վոչ միայն մեր հսկողությանը, ղեկավարմանը և կարգավորմանը յենթարկելու, այլև այդ արտադրությունը խորհրդային տնտեսության ընդհանուր սիստեմի հետ հյուսելու (բրատան) նախադրյալներից մեկը հանդիսանում ե կոռպերատիվ աշխատանքի մի այնպիսի կազմակերպումը, զորք կարողանար ապահովել ընակչության զանգվածների վստահությունը դեպի կոռպերացիան: Բնակչության այդ վստահությունը դեպի կոռպերացիան միայն այն դեպքում կստեղծվի, յերբ մենք արմատապես փոխենք մեր մոտեցումը գյուղացիության կոռպերացման գործին: Վորպեսզի վերացվի գյուղացիության կոռպերացիայի նկատմամբ ունեցած անվստահությունը, կուսակցության կողմից ավելի մեծ վստահություն պետք ե լինի դեպի գյուղացությունը: Միայն այս դեպքում մենք կարող կլինենք աշխատացնելու կոռպերացիան: Կուսակցության վստահությունը դեպի գյուղացիությունը պետք ե արտահայտվի կոռպերացիայի ընտրությունների ազատության յերաշխիքով, կոռպերատիվ կանոնադրության պահպանումով, թե մեր խորհրդային և թե կուսակցական մարմինների կողմից կոռպերատիվ աշխատանքի մեջ յեղած վարչական միջամտությունների մեթոդների վոչնչացումով: Հանդիպում են վաստեր, վոր վկայում են կոռպերատիվ շինարարության մեջ կուսակցության վարած գիծը բացարձակապես չհասկանալու և աղճատելու մասին: Որինակ, հայտնի յեն դեպքեր, յերբ տեղական մարմիններն ընկերներ են գործուղում կոռպերացիա՝ վոչ թե այնողին կապես աշխատելու, այլ զերակրվելու համար: Վորովիետ կոռպերացիան իր աշխատավորներին ոռնիկ և վճարում, ուստի

հերթապահություն եր սահմանվում, թե ով կոռպերացիայում վար ամիսներին և «կերակրվելու»: Հասկանալի յե, վոր այսպիսի կարգեր լինելու դեպքում կոռպերացիան վոչ մի վստահություն չի վաստակի գյուղացիության կողմից: Ամենավճռական կերպով անհրաժեշտ ե վերջ տալ դեպի կոռպերացիան, իսկ նրա միջոցով նույնական դեպի գյուղացիությունը յեղած այս այլանդակ, ծաղրական, հանցագործ վերաբերմունքին, ստեղծելով այնպիսի պայմաններ, զոր ապահովելին ընտրությունների ազատությունը և ընտրված մարմինների գյուղացիության զանգվածների առաջ ունեցած կատարյալ պատասխանատվությունն ու հաշվենթավարությունը:

Վճռապես պետք ե թողնել կոռպերացիայի աշխատանքի վերաբերմամբ յեղածվարչական միջամտության մեթոդները սակայն, զրա զիմաց անհրաժեշտ ե բազմանգամ մեծացնել հասարակական աշխատանքը գյուղացիության զանգվածների մեջ և այսպիսով հասնել մի այնպիսի գրության, զոր կոռպերատիվները կառավարող մարմինները գտնվեն չքավորների ու միջակների ձեռքում և զոր կոռպերացիան իր աշխատանքով կարողանաբարարել գյուղացիության հիմնական զանգվածների պահանջներին:

Կոռպերատիվ վարչական մարմինների ընտրության ազատություն, ընտրովի մարմինների լիակատար հաշվենթավարություն և պատասխանատվությունը ընտրողների առջև, կանոնադրությունների ամենածիշտ պահպանում, վարչավորելու (ածմինդրացրուանու), հրամանատրելու, ճնշում գործ դնելու մեթոդները հասարակական աշխատանքի զարգացմամբ և ուժեղացմամբ փոխարինել—ահա կոռպերատիվ շինարարարության թերությունները վերացնելու և գյուղացիության զանգվածի վստահությունը նվաճելու ուղիները:

Մենք այժմ զյուլի տնտեսական կյանքում այնպիսի փոփոխություններ ենք ապրում, վորոնք արտահայտվում են կամիալիստական հարաբերությունների զարգացմամբ գյուղատնտեսության մեջ: Պրոլետարական դիկտատորայի զորությունը, աղգայնացված արդյունաբերության, տրամսալորտի, բանկերի և այլն— զարգացումը և աճումը բավականաշատ մեծ են, և կարող ենք չվախենալ նեպի (Նոր տնտեսական քաղաքականության) ծավալումից գյուղում: Նեպի այդ ծավալումը գյուղում և «զինվորական կոմունիզմի» ժառանգություն մնացած վարչությունը համար առաջարկուած է աշխատավորներին ոռնիկ և վճարում, ուստի

կան մեթոդների վերացումը ամենասերտ կերպով կազմված են գյուղում նույն որինականությունն ապահովելու հետ, վոր անց և կացված քաղաքում: Առանց որինականության այդ պայմաններն ստեղծելու զուր և մտածել այն մասին, թե կարելի յէ հաջող կերպով կոռպերացիա կառուցել և իրագործել կոռպերացիայի առջև կանգնած վիթխարի խնդիրները և ամենից առաջ, գյուղացիության վատահությունը նվաճելու խնդիրը:

Այսպիսով բնակչության կոռպերացումը շաղկապված և գյուղի վերաբերմամբ կուսակցության գրած այլ խնդիրների խսկական իրագործման հետ, — խորհուրդների աշխուժացման, գյուղում ազնիվ վարչություն ունենալու պայքարի հետ և այլն:

Մեր քաղաքականության այս ընդհանուր խնդիրների տեսականից՝ կոռպերացիայի դերը գյուղում հանդիս և գալիս այնպիսի գծերով, վորոնք այդ դերը նմանեցնում են արհմիությունների դերին:

Ինչպիս վոր արհմիությունները սոցիալիստական և խորհրդային շինարարության գոլոց և բանվորական զանգվածների համար և հանդիսանում են այն կազմը, վորի միջոցով կուսակցությունը շաղկապվում և միլիոնավոր անկուսակցական բանվորների հետ, այնպես ել կոռպերատիվները գյուղում պետք և լինեն այն կաթսան, վորի մեջ գյուղացիական անկուսակցական զանգվածը յեփում ե՝ խորհրդային պետության մեջ ամենագործոն մասնակցություն ունենալու համար:

Այս շըջանում, յերբ գյուղում կական զարգանալ կապիտալիստական հարաբերություններն անհամեմատ ավելի մեծով քան առաջ եր, անհրաժեշտ և կոռպերացիային կրկնակի ուշադրությունը վերաբերվել, զարձնելով նրան խորհրդային իշխանություն և սոցիալիստական հասարակություն կազմակերպելու խսկական հիմունք:

XIV-րդ կուսկոնքերանի կողմից կոռպերացիայի մասին ընդունված բանաձեվին ծանրանալու համար՝ Կարգալ Հայուսանի Կոմկուսի Կենտրոնի հրատարակությամբ լույս տեսած XIV-րդ կուսկոնքերանի բանաձեվերը գրելով:

3. Չալով. — Հաշվապահության համառոտ ծեռնարկ:

4. Կոժանենի. — Ինչ պետք է խմանա ամեն մի բանվոր:

5. Կույբընեվ. — Լենինը ու կոռպերացիան:

ՊԵՏՐԱՑՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(ինքնուրուց)

1. Պ. Փոլյան. — Կոռպերատիվի ցավերից
2. Մարգո. — Կինը յեզ կոռպերացիան
3. Գ. Մբով. — Լենինն ու կոռպերացիան (չափածո):

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ”

ՅԵՐԿՇԱԲԱԹԱՔԵՐՔ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տարեկան 3 ա. 50 կ.	3 ա. 80 կոպեկ.
Կես տարի 1 » 80 կ.	1 » 90 »
3 ամիսը 1 »	1 » 10 »

Հասցեն՝ Յերևան, Շահումյան փողոց № 3—Շայանի կողմանի Խմբագրություն

ԳԻՆՆ-Ե 25 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0209755

